ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 օգոստոսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

114
(2964)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ԵՐԿՄՏՈՒՄ Է ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Նիկոլ Փաշինյանին Մայր աթոռից հրավեր չեն ուղարկել Մայր տաճարի վերաօծման ու Մյուռոնօրհնության արարողություններին մասնակցելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ սեպտեմբերի 28-29-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի կունենան Մայր տաճարի վերաօծումը եւ սրբալույս Մյուռոնի օրհնությունը:

Ամենայն հայոց կաթողիկոսի գլխավորությամբ՝ Մայր Աթոռում պատրաստվում են այս կարեւոր իրադարձություններին, քանի որ մտադիր են հավուր պատշաճի եւ մեծ շուքով կազմակերպել ծիսակատարությունները:

Ի թիվս շատ հյուրերի՝ Ամենայն հայոց կաթողիկոսը 1500 սփյուռքահայերի է հրավիրել արարողակարգին մասնակցելու համար:

Իշխանություն-եկեղեցի լարված հարաբերությունների ֆոնին՝ Մայր Աթոռում երկմտում են՝ հրավիրե՞լ ՀՀ իշխանություններին Մայր տաճարի վերաօծմանը, թե՞ ոչ, կամ արդյո՞ք հրավերի դեպքում նրանք կգան:

«Ժողովուրդ» օրաթերթին վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը հայտնեց, որ վարչապետի աշխատակազմը Մայր Աթոռից դեռ պաշտոնական հրավեր չի ստացել վերաօծման եւ Մյուռոնօրհնության արարողություններին մասնակցելու համար:

Նշենք, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, դեռ 2018 թվականից սկսած, մարտահրավեր է նետել Հայ առաքելական եկեղեցուն. թե՛ Փաշինյանը, թե՛ մյուս ՔՊ-ականները ամենաբարձր ամբիոններից թիրախավորում են Ամենայն հայոց կաթողիկոսին, մյուս եկեղեցականներին, իրենց կողմնակիցների ձեռամբ ակցիաներ են կազմակերպում՝ պահանջելով կաթողիկոսի հրաժարականը:

ՔՊ-ականների «վրեժխնդրությունն» այն աստիճանի է հասել, որ որոշել են հիմա էլ եկեղեցու գույքը հարկելու նախագիծ մշակել եւ այդ ուղղությամբ են աշխատում:

ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի գործը հակակոռուպցիոն դատարանի վերջնական փուլում է. առաջիկայում ճառով հանդես է գալու մեղադրող դատախազը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ռուբեն Վարդազարյանը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ հարցաքննության հրավիրելու ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանին, նախկին Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին եւ այլ անձանց, սակայն դատարանը մերժել է՝ պատճառաբանելով, թե նրանք մեղադրանքի հետ կապ չունեն: Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդազարյանը մեղադրվում է արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար: Վարդազարյանը, ըստ մեղադրանքի, 2019 թվականի հուլիսի 19-ից զբաղեցնելով ԲԴԽ նախագահի պաշտոնը, հանդիսանալով դատական իշխանության մարմնի ղեկավար աշխատող, միջամտել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անդրանիկ Սիմոնյանի կողմից արդարադատության իրականացմանը: Ըստ Սիմոնյանի հաղորդման՝ Վարդազարյանը «ալավերդցի Վահագն» անունով հայտնի Վահագն Աբգարյանի գործով է իրեն դիմել: Աբգարյանը մեղադրվում է Ալավերդու բնակիչ Կամո Փիրուզյանի սպանությունը կազմակերպելու, ինչպես նաեւ սպանության գործով իր օգտին գործողություններ կատարելու եւ կաշառք տալու համար. գործով առկա է նաեւ ձայնագրություն: Ըստ մեղադրանքի՝ Ռուբեն Վարդազարյանը Signal հավելվածի միջոցով կապ է հաստատել Անդրանիկ Սիմոնյանի հետ եւ վերջինիցս պահանջել (խնդրանքի եղանակով) փոխել Աբգարյանի խափանման միջոցը՝ կալանավորումը: Վարդազարյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում: Հիշեցնենք, որ խոսքը նույն Անդրանիկ Սիմոնյանի մասին է, որը այս գործից հետո նոր պաշտոն ստացավ՝ դառնալով ՀՀ ԿԱ ԱԱԾ տնօրենի տեղակալ:

Քաղաքական իշխանությունների օրակարգում ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի հեռացման հարցն է դրված. «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դեռեւս անցած ամիս են ցանկացել «ազատվել» նրանից, սակայն չեն կարողանում համապատասխան փոխարինող գտնել: Իսկ ինչի՞ց է դժգոհ քաղաքական իշխանությունը. բանն այն է, որ Կարեն Անդրեասյանը ընդդիմանում է քաղաքական իշխանությունների որոշ պահանջներ կատարել, բացատրում է, որ «այդպես չի կարելի», չի կարող այս կամ այն հրահանգը իրականացնել, ինչն էլ, իհարկե, քաղաքական իշխանությունների սրտով չէ, եւ նոր պրոբլեմ է դարձել նրանց համար: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց Կարեն Անդրեասյանից մեկնաբանություն ստանալ տեղեկության վերաբերյալ, մեզ պատասխանեցին ԲԴԽ-ից՝ հայտնելով. «Բամբասանքներն ու փողոցային ասեկոսեները անհարմար է ոչ միայն մեկնաբանելը, այլ նույնիսկ հրապարակելը»:



Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Տաթեւիկ Գրիգորյանը քննում է ՍԴ նախկին դատավոր Հրայր Թովմասյանի գործը, որի տրամաբանական ավարտը պետք է լինի դատական ակտի տեսքով՝ կամ Հրայր Թովմասյանը մեղավոր է, կամ ոչ. սակայն արդեն 4.5 տարի է գործը շարունակվում է: Նշենք, որ դատավոր Տաթեւիկ Գրիգորյանը իր անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի մասին հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի մայիսի 30-ին: Հետաքրքիրն այն է, որ զբաղվելով նման ակտիվ գործունեությամբ՝ նա չի հայտարարագրել ո՛չ անշարժ գույք, ո՛չ էլ տրանսպորտային միջոց: Գրիգորյանի բանկային հաշիվների մնացորդը տարվա սկզբում եղել է զրոյական վիճակում, իսկ տարվա վերջում դարձել է 179.000 դրամ: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտը կազմել է 11 մլն 911 հազար դրամ, որից 10 մլն 836 հազար դրամը ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտն է, 1 մլն 75 հազար դրամը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ից ստացված փոխառությունների (վարկեր) գումարը: Տաթեւիկ Գրիգորյանի՝ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 900 հազար դրամ: Հիշեցնենք նաեւ, որ 2020 թվականին կրակել էին Երեւանի ընդհանուր իրավասության Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների դատարանի դատավոր Տաթեւիկ Գրիգորյանի աշխատասենյակի պատուհանին:

ԶՐՈՒՅՑ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԳՈՐԾԸ ՏԵՂԻՑ ՉԻ ՇԱՐԺՎՈՒՄ

Երեկ ArmLur.am-ը հայտնեց, որ Նուբարաշենի բանտում մահացել է հոկտեմբերի 27-ի գործով մեղադրյալներց Աշոտ Կնյազյանը, որն առնչություն է ունեցել զենքերի ու ռազմամթերքի գործընթացը կազմակերպելու հետ: Ըստ նախնական վարկածի՝ նա սրտի կաթված է ստացել:

Փաստորեն, հոկտեմբերի 27-ի գործով ցմահ դատապարտվածներից ողջ են Նաիրի եւ Կարեն Հունանյանները, Դերենիկ Բեջանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը դեռեւս 2021 թվականին գրել էր. «1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած ահաբեկչության կազմակերպիչների վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործով 2020 թվականի ընթացքում կատարվել են մի շարք քննչական եւ դատավարական գործողություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ օգտագործված զենքերի ու ռազմամթերքի հետ առնչություն ունեցած անձանց պարզելու նպատակով հարցաքննվել են մեկ տասնյակից ավելի անձինք, այդ թվում՝ Նաիրի Հունանյանը, Կարեն Հունանյանը, Դերենիկ Բեջանյանը, Աշոտ Կնյազյանը, Անահիտ Բախշյանը եւ Արամ Սարգսյանը: Նշված ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումների հիման վրա կատարվել են բազմաթիվ առգրավումներ»:

Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ նախկին փոխնախագահ, հոկտեմբերի 27-ի ահաբեկչության զոհ Յուրի Բախշյանի կնոջ՝ Անահիտ Բախշյանի հետ:

-Տիկին Բախշյան, երեկ առավոտյան հայտնի դարձավ, որ Նուբարաշեն ՔԿ-ում մահացել է հոկտեմբերի 27-ի գործով վկաներից Աշոտ Կնյազյանը: Նախնական վարկածի համաձայն՝ նա հանկարծամահ է եղել սրտի կաթվածից: Ստեղծվել է մի իրավիճակ, որ այսօրվա դրությամբ գործով վկաներից միայն երեքն են ողջ՝ Նաիրի եւ Կարեն Հունանյանները, Դերենիկ Բեջանյանը: Մյուս վկաները մահացած են: Այս պայմաններում, ըստ Ձեզ, տիկին Բախշյան, ինչպե՞ս եք պատկերացնում գործի ամբողջական բացահայտումը:

-Քսանհինգ տարի է անցել այդ ահաբեկչությունից, եւ քսանհինգ տարի առաջ, երբ բոլորը ողջ էին, գործը չի բացահայտվել, եւ այսօր, երբ ահաբեկիչներից միայն երեքն են ողջ, իսկ վկաներից շատերն արդեն մահացած են, գործը չի բացահայտվելու՝ հակառակ նրան, որ 2019 թվականի դեկտեմբերի 25-ին կառավարության որոշումով բավարարվել է իմ բողոքը: Ես դիմել էի՝ վերաբացելու 2004 թվականին անջատված մասով գործը՝ կազմակերպիչների եւ հրահրողների վերաբերյալ: Գործը բացվել է. անցել է հինգ տարի, սակայն ոչինչ չի արվել: Աշոտ Կնյազյանը մահացավ, վաղը, մյուս օրը, մյուսներն էլ կմահանան եւ կասեն. «Վե՛րջ, այլեւս մարդ չկա, որ հարցաքննենք»:

Վերաբացված գործում Կնյազյանի վերաբերյալ դրվագ չկա, քանի որ նա դահլիճում չի եղել: Նա նշել է, որ տղաներին իր մեքենայով բերել է Ազգային ժողով եւ վերջ: Սակայն դատավարության ժամանակ խոսակցություններ էին պտտվում այն մասին, որ իր մեքենայով նաեւ զենքերն են բերել, կամ, որ սխալ բան չասեմ՝ խոսվում էր ինչ-որ կանաչ «ՈՒԱԶ»-ի մասին: Ուզում եմ ասել, որ Աշոտ Կնյազյանը ահաբեկիչ խմբի ամենափոքր «վինտիկն» էր, սակայն Նաիրի Հունանյանի եւ մյուսների ընկերն էր:

-Տիկին Բախշյան, Նիկոլ Փաշինյանն իշխանության գալիս ասում էր, որ գործը կարճ ժամանակում բացահայտվելու է, սակայն այն դեռ բացահայտված չէ, ի՞նչ եք կարծում Նիկոլ Փաշինյանը չի՞ ցանկանում, որ այն բացահայտվի, թե խանգարող այլ հանգամանքներ կան:

-Անձամբ Փաշինյանի կողմնակիցն եմ եղել՝ հատկապես այն հիմնավորմամբ, որ նրա ծրագրում կային «մարտի 1-ի» եւ «հոկտեմբերի 27-ի» գործերի բացահայտում, ու երբ 2019 թվականին, իմ դիմումի հիման վրա, գործը վերաբացվեց ես մտածեցի, որ քաղաքական կամք կա, բայց այժմ կասկածում եմ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

«ՎԵՐԱՐՏՈՆՅԱԼ» ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԵՐԱԾՎԵԼ Է ՔՊ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ

Իշխանությունները խորհրդարանը վերածել են իրենց ՔՊ կուսակցության գրասենյակի: Բոլոր միջոցառումներին, հանդիպումներին, ինչպես նաեւ գործուղումներին մասնակցելու իրավունք ունեն միայն ՔՊ-ական պատգամավորները, իսկ ընդդիմության ձայնի իրավունքն ԱԺ-ում խախտված է:

Այսպիսով՝ փոքր եւ միջին ձեռնարկատիրությունների (ՓՄՁ) ասոցիացիան հաղորդագրություն էր տարածել, որ իրենց նախաձեռնությամբ հուլիսի 25-ին հանդիպում է կայացել ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի պատգամավորների հետ:

Ըստ հաղորդագրության՝ հանդիպման նպատակն էր, վերականգնել ԱԺ տնտեսական հանձնաժողովին կից, դեռեւս 2019 թ. փետրվարին ստեղծված ԱԺ տնտեսական հանձնաժողովին կից ՓՄՁ աշխատանքային խմբի աշխատանքները՝ որպես ԱԺ-ՓՄՁ երկխոսության հարթակ:

Հանդիպմանը մասնակցում էին ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի պատգամավորներ, ԵՄ հայաստանյան գրասենյակի առեւտրի գծով պատասխանատու պարոն Կարեն Ազարյանը, ՓՄՁ ասոցիացիայի կառավարման խորհրդի նախագահ Հակոբ Ավագյանը, կառավարման խորհրդի անդամներ Արման Պետրոսյանը, Ալին Մասրլիանը եւ Կարինե Ղուկասյանը, ովքեր նաեւ փոքր եւ միջին բիզնեսի տարբեր ոլորտի ներկայացուցիչներ են:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ հերթական անգամ ՔՊ-ն, «ԱԺ պատգամավոր» ասելով, պատկերացնում է միայն իրենց՝ իշխանական պատգամավորներին:

Հաղորդագրության կից տարածված լուսանկարից երեւում է, որ ՓՄՁ ասոցիացիայի անդամների հետ հանդիպմանը ներկա են միայն հանձնաժողովի ՔՊ-ական անդամները՝ հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը, պատգամավորներ Հովիկ Աղազարյանը եւ Դավիթ Առուշանյանը, մինչդեռ հանձնաժողովի ընդդիմադիր անդամները հերթական անգամ ներգրավված չեն ԱԺ-ում անցկացվող հանդիպմանը:

Այսինքն՝ հերթական անգամ խորհրդարանական երկրում, որտեղ ընդդիմության ներկայացվածությունն Ազգային ժողովի շրջանակներում անցկացվող միջոցառումներին պարտադիր պետք է լինի, «Քաղաքացիական պայմանագիրն» անտեսում է այս պայմանը:

Նկատենք նաեւ, որ հատկապես վերջին շրջանում գործուղումների ժամանակ նույնպես ՔՊ-ն, իրենից բացի, չի տեսնում ոչ ոքի, ու միայն իշխանական պատգամավորներն են ընգրկվում պատվիրակությունների կազմում:

Ք. Մ.

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

Անկարայում տեղի է ունեցել Թուրքիայի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Հաքան Ֆիդանի եւ Ջեյհուն Բայրամովի հանդիպումը: Բանակցությունների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության հարցեր, ինչպես նաեւ միջազգային եւ տարածաշրջանային թեմաներ, Ադրբեջանի եւ Թուրքիայի հարաբերությունները Հայաստանի հետ:

Բայրամովը նշել է, որ Ադրբեջանը եւ Թուրքիան շարունակելու են համատեղ քայլեր ձեռնարկել տարածաշրջանում խաղաղության հաստատման համար: Հանդիպման ավարտին լրագրողների հետ կայացած ասուլիսում Բայրամովը կրկին դժգոհել է Հայաստանի կողմից զինամթերք ձեռք բերելու գործընթացից՝ պնդելով, թե Երեւանին դեպի այդ քայլը դրդում են երրորդ երկրները:

Միաժամանակ, նա նշել է, թե Ադրբեջանը կարծում է, որ տարածաշրջանում առկա է պատմական հնարավորություն՝ հաստատելու կայուն խաղաղություն, եւ բանակցություններում դրական դինամիկա է նկատվում:

Այդուամենայնիվ, Բայրամովը հերթական անգամ հայտարարել է, թե Հայաստանը տարածքային պահանջներ ունի Ադրբեջանի եւ Թուրքիայի նկատմամբ:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը խաթարվել է եւ Սահմանադրական դատարանի դատավորին առաջադրվել է մեղադրանք՝ սահմանադրությամբ նախատեսված երաշխիքները չպահպանելով, այդ թվում՝ ՍԴ չէին դիմել՝ քրեական հետապնդման համաձայնություն ստանալու համար»: Այս մասին երեկ՝ օգոստոսի 28-ին, դատարանի մոտ լրագրողների հետ զրույցում նշեց Սահմանադրական դատարանի դատավոր Հրայր Թովմասյանի պաշտպան Արամ Օրբելյանը:

«Բացի այդ, այս քրեական գործը հարուցվել է, եւ Հրայր Թովմասյանին մեղադրանք է առաջադրվել խախտումներով, մասնավորապես, օպերատիվ անանուն աղբյուրների հիման վրա, որն օրենքով արգելված է: Քրեական հետապնդումը փաստացի սկսվել է շատ ավելի շուտ, քան իրականացվել է ֆորմալ մեղադրանք առաջադրելու գործընթացը: Դրա շրջանակում այդ գործողությունները կատարվել են ոչ գլխավոր դատախազի կողմից:

Մեղադրանքում ներկայացված չեն գործողություններ. ինչն էլ որ ներկայացված է, կամ ենթադրում ենք, որ «սա» են նկատի ունեցել, դա նույնպես հաստատված է՝ հղում անելով ապացույցների վրա»,- ասաց Օրբելյանը՝ հավելելով, որ նկատում է պրոցեսն արագացնելու միտում:

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ՝ ՊՈՒՏԻՆԻ ԵՎ ԱԼԻԵՎԻ ՄԻՋԵՎ

Պուտինը եւ Ալիեւը գոհունակություն են հայտնել ՌԴ նախագահի՝ վերջերս Ադրբեջան կատարած պետական այցի հաջող արդյունքների կապակցությամբ: Այս մասին հայտնում է Կրեմլը: Պուտինն Ալիեւի հետ հեռախոսազրույցում հաստատել է Ռուսաստանի Դաշնության պատրաստակամությունը՝ շարունակելու աջակցել Բաքվին եւ Երեւանին կարգավորման համար լուծումներ մշակելու հարցում:

«Կողմերը քննարկել են նաեւ Անդրկովկասում տիրող իրավիճակը, այդ թվում՝ ադրբեջանա-հայկական խաղաղության պայմանագրի նախապատրաստումը, հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատմանը, տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակմանն առնչվող հարցեր»,- նշված է հաղորդագրությունում:

ԻՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՐՁԱԿՎԵԼ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻ ՎՐԱ

Իրանը կարող է հարձակվել Աֆրիկայում, Եվրոպայում եւ Լատինական Ամերիկայում իսրայելական դիվանագիտական հաստատությունների վրա՝ ի պատասխան Թեհրանում պաղեստինյան ՀԱՄԱՍ շարժման քաղբյուրոյի ղեկավար Իսմայիլ Հանիեի սպանության: Այս կարծիքը The New York Times-ին (NYT) է հայտնել ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության նախկին ղեկավար, պաշտոնաթող գեներալ Քենեթ Մաքքենզին: Նրա խոսքով՝ իրենց խոցելիության պատճառով դեսպանատները «հեշտ թիրախներ» են: Ըստ հրատարակության՝ ամերիկացի պաշտոնյաները կարծում են, որ Թեհրանը ձգձգում է գործողությունները հրեական պետության դեմ, քանի որ սպասում է Գազայի հատվածում գործարքի շուրջ բանակցությունների ավարտին:

ԱՌՆՎԱԶՆ 58 ՁՈՀ՝ ԳԱԶԱՅՈՒՄ

Գազայի հատվածում շարունակվող մարտերի հետեւանքով վերջին 24 ժամվա ընթացքում (խմբ) առնվազն 58 մարդ է զոհվել: Այս մասին անկլավի առողջապահության նախարարությունը հայտնել է իր Telegram ալիքում: Գերատեսչության տվյալներով՝ օրվա ընթացքում ավելի քան 130 պաղեստինցի վիրավորվել եւ հոսպիտալացվել է: Գազայում 2023 թվականի հոկտեմբերի 7-ից ի վեր սրման հետեւանքով զոհերի ընդհանուր թիվը, ըստ առողջապահության նախարարության տվյալների, հասել է 40 534-ի, վիրավորվել է 93 778 մարդ: Իրավիճակը Մերձավոր Արեւելքում կտրուկ վատթարացավ այն բանից հետո, երբ 2023 թվականի հոկտեմբերի 7-ին Գազայի հատվածից իսրայելական տարածք ներթափանցեցին պաղեստինյան արմատական ՀԱՄԱՍ շարժման զինյալները: Ի պատասխան՝ Իսրայելը հայտարարեց Գազայի հատվածի ամբողջական շրջափակման մասին եւ սկսեց հարվածներ հասցնել Լիբանանի եւ Սիրիայի որոշ շրջաններին, որից հետո ցամաքային գործողություն սկսեց անկլավում: Գործողությունները շարունակվում են մինչեւ օրս:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Վերջին օրերին թե՛ Մերձավոր Արեւելքում, թե՛ Ռուսաստան-Ուկրաինա ռազմական գոտում իրավիճակը թեժացել է: Նոր աշխարհաբաժանմանն ընդառաջ գերտերությունները ու հակամարտությունների կողմերը պայքար են մղում իրենց դիրքն ամրացնելու եւ իրավիճակից հնարավորինս փիչ կորուստներով դուրս գալու համար, եւ այդ ճանապարհին փիչ չեն մարտերը, պայթյունները եւ ռմբակոծությունները:

Ի՞նչ է կատարվել Մերձավոր Արեւելքում վերջին օրերին: Այստեղ մեծամաշտաբ պատերազմի վտանգը թուլացել է, սակայն, ըստ Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմական ղեկավարության՝ Իրանը շարունակում է վտանգ ներկայացնել, քանի որ պատրաստվում է հարձակում գործել Իսրայելի ուղղությամբ:

Ավելի վաղ՝ օգոստոսի 25-ի առավոտյան, լիբանանյան «Հըբալլահ»-ը օդային հարվածներ էր հասցրել իսրայելյան ռազմական նշանակության կետերի ուղղությամբ, ապա Իսրայելը փոխադարձ հարվածներ էր հասցրել: «Հըբալլահ»-ի ռազմական գործողություններից հետո Իսրայելում արտակարգ դրություն էր հայտարարվել: Լիբանանի վարչապետն էլ, իր հերթին, արտակարգ իրավիճակների հարցերով նախարարական կոմիտեի նիստ էր հրավիրել:

Նույն ընթացքում Գազայում պատերազմը շարունակում է մարդկային կյանքեր խլել, միեւնույն ժամանակ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ ռազմական գործողություններն ակտիվացել են: Ռուսաստանի Կիրովի մարզն առաջին անգամ ենթարկվել է ուկրաինական ԱԹՍ-ների հարձակման: Մարզպետ Ալեքսանդր Սոկոլովը հայտնել է, որ զոհեր եւ վիրավորներ չկան: Ռուսաստանի զինված ուժերն էլ իրենց հերթին վերահսկողության տակ են վերցրել Դոնեցկի Ժողովրդավարական Հանրապետության Կամիշեմկա բնակավայրը:

ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն հայտնել է, որ ռուս բնակչության միասնականությունը խաթարելու համար մեծանում է տեղեկատվական ճնշումը:

Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը նշել է, որ այս պահին Ուկրաինայի հետ բանակցությունների համար նախադրյալներ չկան, իսկ հնդկական կողմը խաղաղության քաղաքական եւ դիվանագիտական միջոցներով կարգավորման կողմնակցի դիրք է զբաղեցնում:

Ռազմական գործողություններին զուգահեռ Ուկրաինայի օրենսդիր մարմինը՝ Գերագույն ռադան, որոշում էր ընդունել ռուս ուղղափառ եկեղեցու գործունեությունը երկրում արգելելու վերաբերյալ: Որոշմանն արձագանքել էր Հռոմի պապը: Ֆրանցիսկոս պապն ասել է. «Մտածելով Ուկրաինայում վերջերս ընդունված օրենքների մասին՝ ես վախ ունեմ աղոթողների ազատության համար. ով իրապես աղոթում է, միշտ աղոթում է բոլորի համար: Աղոթքը չի կարող չար արարք գործելու պատճառ լինել, եթե ինչ-որ մեկը սեփական ժողովրդի դեմ չարություն է անում, նա մեղավոր կլինի դրանում, բայց նա աղոթելիս չարիք չի գործում: Եվ թող աղոթելու հնարավորություն ստանա նա, ով ցանկանում է աղոթել այն վայրում, որն իր եկեղեցին է համարում: Խնդրում եմ, թող ուղղակիորեն կամ անուղղակի չվերացվի ոչ մի քրիստոնեական եկեղեցի»:

Աշխարհաքաղաքական նման լարված իրավիճակում հարկ է աչալուրջ լինել սպասվող զարգացումների հանդեպ, որոնք կարող են անմիջական ազդեցություն ունենալ Հարավային Կովկասում տիրող իրավիճակի եւ խաղաղության վրա՝ հաշվի առնելով հատկապես Թուրքիայի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ Ադրբեջանի եւ Ռուսաստանի Դաշնության ղեկավարների միջեւ վերջին օրերին ակտիվացած շփումներն ու Իսրայելի քաղաքական մեկնաբանությունները ու պայմանավորվածությունները թուրքական գործոնի հետ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

6,3 ՄԼՆ ԴՐԱՄԻ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԱՐՔԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի Հանրապետության պետական գնումների կայքից տեղեկանում է, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը «ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ-ի հետ կնքել է 6 մլն 366 հազար դրամ արժողությամբ պայմանագիր:

Պայմանագրով նախատեսվում է անվտանգության ապահովման սարքեր ձեռք բերել: Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում՝ գնորդը կարող է հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրով ձեռք է բերվել 9 տեսաձայնագրիչ՝ Hikvision DS-7608NI-M2, հիշողության 2 կոշտ սկավառակ՝ ST6000VX001-520, 26 տեսախցիկ՝ Hikvision DS-2CD2T87G2HLI(4mm)(eF), 1 սերվերային պահարան՝ LNPRB-09U6060-BL-F եւ այլ տեխնիկական անհրաժեշտ իրեր:

ԲԱՅՐԱՄՈՎԸ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը հայտարարել է, որ Երեւանի եւ Բաքվի միջեւ խաղաղության պայմանագրի նախագծի զգալի մասը բանակցությունների ընթացքում համաձայնեցվել է:

Այս մասին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարը հայտարարել է Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում:

Բայրամովը, ինչպես նշել էինք, իր բողոքն է արտահայտել այն առնչությամբ, թե Հայաստանը սպառազինություն է ձեռք բերում տարբեր երկրներից՝ չնայած այն հանգամանքին, որ հենց Ադրբեջանը նույնիսկ 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմից հետո անընդհատ սպառազինություն է գնում տարբեր երկրներից:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանն էլ Բայրամովի հետ հանդիպումից հետո ընդգծել է, որ բանակցությունների ընթացքում իր ադրբեջանցի գործընկերոջ հետ քննարկել է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ հավելելով, որ Ադրբեջանը եւ Թուրքիան կշարունակեն համատեղ քայլեր ձեռնարկել տարածաշրջանում խաղաղություն հաստատելու համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՋԱՏՎԱԾ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

«ՋԱՎԹԵԼ» Է ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՔԵՐԸ

«ՀՀ նախկին հատուկ ֆինչական ծառայության (ՀՔԾ)աշխատակազմի ղեկավար Դավիթ Սուֆիասյանը շարունակում է ընդլայնել իր բիզնես գործունեությունը հանքարդյունաբերության եւ բնակարանաշինության ոլորտում: 100% բաժնեմասով նրան պատկանող «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն այս պահին իրականացնում է Երեւանում գտնվող 14 եւ Արտաշատ քաղաքում գտնվող 1 նորակառույց բնակելի համալիրների կառուցապատման աշխատանքները:

Բացի սրանից՝ արտոնյալ հարկատու հանդիսացող «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն ակտիվորեն զբաղվում է հանքարդյունաբերությամբ՝ մասնավորապես արտադրելով բետոն, բազալտի խճաքար, գետի խճաքար, գետի ավազ, գետի ավազ՝ լվացված, պերլիտային ավազ, լիթոիդային պեմզա, հրաբխային խարամ, կրաքար: Այսինքն՝ ինքնաբավ շինարարության համար գրեթե ամեն ինչ. սպառողին է մատուցում 9 տեսակի արտադրանք: Թվում է, թե կատարյալ աշխատող ընկերություն է, սակայն ՍՊԸ-ն մի քանի անգամ ազատվել է մաքսատուրքից: 2018 թվականի հունվարի 25-ին էլ «ՄԼ Մայնինգը» ստացել էր 2 մլրդ դրամի կամ 5 մլն դոլարի սարքավորումների ներմուծման մաքսատուրքի արտոնություն:

Ոլորտը մենաշնորհ դարձրած ՍՊԸ-ն այնպես է ֆինանսները շրջանառում, որ, ըստ որոշ տեղեկությունների, բնակելի համալիրների կառուցման համար բացառապես իր կողմից արտադրած հանքանյութն ու քարերն է օգտագործում:

Նախկին պաշտոնյան շարունակում է մնալ իշխանության սերտ օղակը՝ վերջինիս կողմից պարբերաբար արժանանալով հաճոյանքի եւ գովեստի, սակայն Երեւանում օդի աղտոտվածության, փոշու, կեղտի պատճառը հաճախ հենց շինհրապարակներում նորմերին անամապատասխան պայմաններով իրականացվող շինաշխատանքներն են, երբ մի ընկերության կողմից 14 բնակելի համալիր է կառուցվում, իսկ փոշին եւ կեղտը շնչում են հասարակ քաղաքացին, երեխան:

Հավելենք, որ 2019 թվականի մայիսի 23-ին կառավարությունը մաքսատուրքից ազատման արտոնություն տվեց, ի թիվս այլ կազմակերպությունների, նաեւ «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ին: Ըստ կառավարության հիմնավորման՝ ընկերության կողմից ներմուծվող սարքավորումներն օգտագործվելու են հանքարդյունաբերության մեջ (Կոտայքի մարզ)»:

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար անդրադարձել է «ՄԼ մայնինգ» ընկերության շուրջ առաջացած աղմկահարույց դեպքերին եւ դատական գործընթացներին:

Օրինակ՝ դեռեւս անցյալ տարի «Ժողովուրդ» օրաթերթը նշել էր, որ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն դիմել էր դատարան՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից պահանջելով, որ 20.06.2023 թ. թիվ 1112-Ա հրամանը վերացնի եւ բարենպաստ վարչական ակտ կայացնի ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիու պեռլիտային ավազների հանքավայրի հարավարեւմտյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք տալու մասին:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27»-Ի ԳՈՐԾՈՎ

ՄԱՀԱՑԵԼ Է ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻՑ Ա. ԿՆՅԱԶՅԱՆԸ

Նուբարաշենի բանտում մահացել է «հոկտեմբերի 27-ի» գործով մեղադրյալներից Աշոտ Կնյազյանը, որն առնչություն է ունեցել զենքերի ու ռազմամթերքի գործընթացը կազմակերպելու հետ: Ըստ նախնական վարկածի՝ նա սրտի կաթված է ստացել:

Հանցախմբի վկաները մահանում են. 2004 թվականին ՀՀ Ազգային ժողովի շենքում ինքնասպան (կախվելու միջոցով) եղավ գործով վկա Հասմիկ Աբրահամյանը. նա ԱԺ արձանագրային բաժնի աշխատակից էր:

2004 թվականին ավտովթարից մահացավ «հոկտեմբերի 27-ի» գործով կալանավորված, ապա ազատ արձակված ԱԺ պատգամավոր Մուշեղ Մովսիսյանը: Նա ԱԺ արդեն նախկին պատգամավոր Առաքել Մովսիսյանի՝ Շմայսի եղբայրն էր:

2004 թվականի սեպտեմբերի 1-ին ԱՄՆ-ում ավտովթարից մահացավ նաեւ ԱԺ բուժքույր Ռոզա Հովհաննիսյանը. նա հոկտեմբերի 27-ի գործով անցնող կարեւորագույն վկաներից էր: Այն մարդն էր, որ հայտնել էր, թե դեպքի օրը Կարեն Դեմիրճյանի աշխատասենյակում մի խումբ դիմակավորված անձանց է տեսել:

Գործով կարեւորագույն վկա, «Հանրային» հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Տիգրան Նաղդալյանն էլ սպանվեց 2002-ին հենց իր տան շքամուտքում:

2014 թվականի մարտին ԱՄՆ-ում մահացավ 1999-ին ՀՀ ազգային հեռուստատեսության թղթակից-մեկնաբան, Նաիրի Հունանյանի մտերիմ ընկեր Տիգրան Նազարյանը: Նա ահաբեկչության օրը գնացել էր Ազգային ժողովի դահլիճ եւ մոտ երկու ժամ զրուցել Նաիրի Հունանյանի հետ:

2017 թվականին բանտում մահացավ Էդիկ Գրիգորյանը:

2024 թվականի օգոստոսի 26-ին Նուբարաշենի բանտում մահացավ Աշոտ Կնյազյանը:

Փաստորեն, «հոկտեմբերի 27-ի» գործով ցմահ դատապարտվածներից ողջ են Նաիրի եւ Կարեն Հունանյանները, Դերենիկ Բեջանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը դեռեւս 2021 թվականին գրել էր. «1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած ահաբեկչության կազմակերպիչների վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործով 2020 թվականի ընթացքում կատարվել են մի շարք քննչական եւ դատավարական գործողություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ օգտագործված զենքերի ու ռազմամթերքի հետ առնչություն ունեցած անձանց պարզելու նպատակով հարցաքննվել են մեկ տասնյակից ավելի անձինք, այդ թվում՝ Նաիրի Հունանյանը, Կարեն Հունանյանը, Դերենիկ Բեջանյանը, Աշոտ Կնյազյանը, Անահիտ Բախշյանը եւ Արամ Սարգսյանը:

Նշված ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումների հիման վրա կատարվել են բազմաթիվ առգրավումներ»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Pink Berry–Ի ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Լեւոն Սաֆարյանը 23.08.2024 թվականին ազատ է արձակվել, քանի որ քննիչը կալանքի ժամկետի երկարեցման միջնորդություն չէր ներկայացրել: Սակայն նույն օրը քննիչը տնային կալանքի միջնորդություն է ներկայացրել դատարան, որը մերժվել է: Ներկայումս քննիչի կողմից կիրառվել է այլընտրանքային համակցված խափանման միջոցներ՝ գրավ եւ բացակայելու արգելք:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Արաբկիրի թաղապետարանի պաշտոնատար անձանց կաշառքի գործով անցնող, Pink Berry-ի սեփականատեր Լեւոն Սաֆարյանն օգոստոսի 23-ին, ըստ ամենայնի, ազատ կարձակվի: Բանն այն է, որ այս պահի դրությամբ նախաքննական մարմինը որեւէ միջնորդություն չի ներկայացրել դատարան՝ նրա կալանքը երկարաձգելու վերաբերյալ:

Ինչպես հայտնի է՝ կալանքի տակ գտնվող Լեւոն Սաֆարյանը 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի ժամանակ քրեական գործով անցնող Գեւորգ Սաֆարյանի որդին է:

Հիշեցնենք, որ Արաբկիրի թաղապետարանի չարաշահումների գործով մեղադրյալներից 5-ի, այդ թվում՝ երկու պաշտոնատար անձանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, մյուս 3 անձանց նկատմամբ՝ բացակայելու արգելքը»:

ԻՆՉՆ Է ԵՂԵԼ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Քրեակատարողական ծառայության լրատվական բաժնից «Ժողովուրդ» օրաթերթին երեկ հայտնել էին, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող, ցմահ ազատազրկման դատապարտված, 1959 թվականին ծնված Ա.Կ.-ի ինքնազգացողության վատթարացման պատճառով օգոստոսի 26-ին՝ ժամը 19:05-ի սահմաններում, կանչվել է շտապօգնություն:

Ժամը 19:35-ի սահմաններում շտապօգնության անձնակազմի կողմից արձանագրվել է Ա.Կ.-ի կենսաբանական մահը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի նախնական վարկածի համաձայն՝ եղել է սրտի կաթված:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 27-ից 28-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 117 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴՊՐՈՑԸ ՍԱՀՄԱՆԻՑ ՄՈՏ 40 ՄԵՏՐ Է ՀԵՌՈՒ

Կիրանցի հիմնական դպրոցի տնօրեն Վոլոդյա Բաբինյանը հայտնեց, որ գյուղի դպրոցի շինարարության աշխատանքները մոտենում են ավարտին, շենքի ներքին հարդարման աշխատանքներն ավարտվել են, ընթանում են արտաքին հարդարման աշխատանքները: Դպրոցի տնօրենը հույս հայտնեց, որ սեպտեմբերի 2-ին Կիրանց գյուղի աշակերտները կհաճախեն նոր ձեւավորված, սահմանից ճանապարհով եւ պատով բաժանվող, սահմանից մոտ 40 մետր հեռավորությամբ գտնվող դպրոց: Վ. Բաբինյանն ասաց՝ աշակերտների ծնողների մի մասը դպրոցի ավտանգության առումով մտահոգություններ ունեն, հավելեց, որ դպրոցի նախկին շենքը վթարային է: Նրան հարցրինք՝ Կիրանցի դպրոցին միջնակարգի կարգավիճակ տալու մասին: Տնօրենն ասաց, որ դրա համար պետք է լինի ԿԳՄՍ նախարարի հրամանը: 100 տեղանոց նորակառույց դպրոց նոր ուսումնական տարում կհաճախեն Կիրանց գյուղի 38 աշակերտ: Կիրանցից բարձր դասարանցիները՝ 10-12-րդ դասարանների աշակերտները, նախորդ տարիներին հաճախել են Իջեւան համայնքի Ներքին Ծաղկավան եւ Սարիգյուղ բնակավայրերի միջանակրգ դպրոցներ:

35 ԵՎ 33 ՄԻԼԻՈՆՆԵՐԻ «ԱՌԵՂԾՎԱԾԸ»

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը օգոստոսի 20-ին որոշում է ընդունել «Հայաստանի Հանրապետության Լոռու եւ Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրեւներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետեւանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թ. հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշման համաձայն՝աղետի հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման նպատակով բնակիչներին տրամադրել 35 միլիոն 327 հազար 700 դրամ: Տավուշի մարզպետը նախկինում պատասխանելով մեր հարցմանը՝ջրհեղեղից տուժածներին փոխհատուցելու մասին, նշել է. «Գյուղացիական տնտեսություններին, օժանդակ կառույցներին, տնտեսվարողներին, ֆիզիկական անձանց ավտոմեքենաներին պատճառված վնասի փոխատուցման եւ սոցիալական աջակցության հետ կապված հարցերը գտնվում են քննարկման փուլում»: Այսինքն՝ այս փուլում փոխհատուցել են միայն հեղեղված բնակարանների տերերին: Սակայն անցած վեցուկես ամսում՝ որպես պարգեւավճար, պետբյուջեից մեծ գումարներ են բաժանել: Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ 2024 թ. հուլիսի 15-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 33 միլիոն 484 հազար 235 դրամ պարգեւավճար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԶԵԿՈՒՅՑ

ԱՐՑԱԽԻ ԷԹՆԻԿ ԶՏՄԱՆ ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայ Դատի կենտրոնական գրասենյակը գրում է. «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնը, Հայ դատի համակարգում գործող Հայկական իրավական կենտրոնի հովանավորությամբ, հրապարակել է մանրամասն զեկույց՝ անդրադառնալով Արցախում տեղի ունեցած վերջին էթնիկ զտումներին, որոնք պայմանավորված են Ադրբեջանի երկարատեւ հակահայկական խտրական քաղաքականությամբ:

Զեկույցը վիճարկում է, որ Արցախի շրջափակումը, ռազմական հարձակումը եւ հաջորդող բռնի տեղահանումը իրարից առանձնացված միջադեպեր չեն, այլ հայերի դեմ խորապես արմատացած ինստիտուցիոնալ քաղաքականության գագաթնակետ:

Զեկույցը տարբերակում է «էթնիկ զտումներ» եւ «ցեղասպանություն» հասկացությունները՝նշելով, որ թեեւ ցեղասպանությունը սահմանվում է խմբին ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ, էթնիկ զտումները ներառում են որոշակի տարածքից խմբի բռնի հեռացում՝ բռնության եւ ահաբեկչության միջոցով: Արցախի դեպքում Եվրոպական խորհրդարանը եւ տարբեր փորձագետներ իրադարձությունները դասակարգել են որպես էթնիկ զտումներ, ոմանք այս դասակարգումը տարածել են նաեւ ցեղասպանության հանցագործության վրա՝ կապված ծանր պայմանների եւ համակարգված ոչնչացման սպառնալիքի հետ:

Զեկույցի ներկայացրած ապացույցները ցույց են տալիս, որ Ադրբեջանի քաղաքականությունը, ներառյալ՝ շրջափակումը եւ ռազմական գործողությունները, արտացոլում են Արցախի հայկական ներկայությունը արմատախիլ անելու միտումնավոր փորձ: 2022 թ. դեկտեմբերին սկսված շրջափակումը սարսափելի պայմաններ ստեղծեց՝ սահմանափակելով հիմնական ապրանքների եւ ծառայությունների հոսքը, ինչը հանգեցրեց սննդի, դեղորայքի եւ վառելիքի խիստ պակասի: Արդյունքում առաջացած հումանիտար ճգնաժամը հանգեցրեց համատարած թերսնուցման, առողջության վատթարացման եւ կրթական ու առողջապահական ծառայությունների խաթարման: Զեկույցը մանրամասնում է, թե ինչպես են ադրբեջանական ուժերը թիրախավորել գյուղատնտեսական աշխատանքները եւ խոչընդոտել տեղական սննդի արտադրությունը՝ խորացնելով հայ բնակչության տառապանքը:

2023 թվականի սեպտեմբերին սկսված ռազմական հարձակումը ավելի սաստկացրեց ճգնաժամը: Զեկույցը փաստում է, թե ինչպես է այդ հարձակումը, որ սկսվել է ինտենսիվ մարտերով եւ քաղաքացիական ենթակառուցվածքներին հասցված համատարած վնասներով, հանգեցրել քաղաքացիական բնակչության զգալի զոհերի եւ տարհանման աշխատանքների լուրջ խափանումների: Ռազմական հանցագործությունների, այդ թվում՝ հայ խաղաղ բնակչության խոշտանգումների եւ անդամահատումների մասին հաղորդումները ընդգծում են հարձակման դաժանությունը եւ այդպիսի գործողությունների նշանակությունը Արցախից հայ բնակչության բռնի տեղահանման գործում:

Զեկույցը նաեւ ընդգծում է հայկական մշակութային եւ կրոնական վայրերի շարունակական ոչնչացումը Ադրբեջանի իշխանությունների կողմից, որոնք համակարգված ձեւով ջնջում են հայկական հետքերը: Այս ավերումը ներառում է եկեղեցիների, պատմական հուշարձանների եւ խաչքարերի ոչնչացումը, ինչպես նաեւ հայկական մշակութային հետքերը վերացնելու համար հուշարձանների էության նենգափոխումը: Զեկույցը պարունակում է արբանյակային պատկերներ եւ փաստաթղթեր այնպիսի կազմակերպություններից, ինչպիսին է Caucasus Heritage Watch-ը, ինչը ցույց է տալիս մշակութային ոչնչացման չափը, որ դատապարտված է միջազգային կառույցների կողմից, ինչպես UNESCO-ն եւ Եվրոպական խորհրդարանը: Զեկույցն ընդգծում է, որ մշակութային այս ոչնչացումը եւ շրջափակման ազդեցությունը արտացոլում են ադրբեջանական հասարակության մեջ հակահայկական տրամադրությունների ավելի լայն օրինաչափություն: Այն նկարագրում է, թե ինչպես է ադրբեջանական պետական հռետորաբանությունը, ներառյալ՝ հակահայկական բռնության հերոսացումը եւ հայերի նվաստացուցիչ պատկերները, ստեղծել ապամարդկայնացման եւ խտրականության միջավայր: Այս միջավայրը հավերժացվել է պետության կողմից աջակցվող նախաձեռնությունների միջոցով, ինչպիսին է Բաքվի «ռազմավարի պուրակը» եւ սոցիալական ցանցերում տարածվող հակահայկական ատելության խոսքը:

Ավելին՝զեկույցում նշվում է, որ Ադրբեջանի իշխանության տակ գտնվող հայերի նկատմամբ վերաբերմունքը, ներառյալ՝ քաղաքական դրդապատճառներով Արցախի քաղաքական առաջնորդների կալանավորումը եւ հակահայկական բռնության շարունակական հերոսացումը, արտացոլում է մարդու իրավունքների միջազգային չափանիշների անտեսումը: Այն ընդգծում է որ հայկական մշակութային ինքնության համակարգված ժխտումը եւ մշակութային ժառանգության վայրերի ոչնչացումը Արցախում հայկական ներկայությունը վերացնելու Ադրբեջանի ավելի լայն ռազմավարության անբաժանելի մասն է»:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՈՍԱՆՔԱԶՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ ՀԷՑ-Ը ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դեռ հուլիսի 6-ին «Երեւան հէկ»-ում հրդեհ էր բռնկվել, որի պատճառով էլ հաճախակի հոսանքազրկումներ էր էին լինում, հատկապես՝ կենտրոնում:

Այս խնդրով պայմանավորված՝ ՀԷՑ-ից հայտնել էին, որ ըստ նախնական կանխատեսման, առաջացած խնդիրները կվերացվեն մինչեւ օգոստոսի 10-ը:

Չնայած այն հանգամանքին, որ հուլիսի 6-ից անցել է արդեն 1 ամիս եւ ավելի, իսկ օգոստոսի 10-ն էլ վաղուց անցել է, խնդիրը շարունակում է մնալ ակտուալ, այսինքն՝երեւանյան շատ հասցեներ շարունակում են պարբերաբար հոսանքազրկվել:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը զրուցել էր էներգետիկ հարցերով փորձագետ Արա Մարջանյանի հետ, ով մեզ հետ զրույցում դեռ հուլիս ամսին նշել էր, որ ամենաշատը 3 շաբաթում հնարավոր է վերականգնել ամեն բան: Հավելենք, որ երեկ էլ պարզ դարձավ, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) ՀԷՑ-ի դեմ հարուցել է վարչական վարույթ՝20 միլիոն դրամի չափով:

Հարուցված վարչական վարույթի արդյունքում հաստատվել է ընկերության կողմից ոչ հավաստի եւ ոչ սպառիչ տեղեկություն ներկայացնելու փաստը, ինչը ընկերության կողմից ընդունվել է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 1 մարդ զոհվել է, 22-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ՝ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզային վարչության Սեւանի տեղամասի աշխատակիցների կողմից շարունակվում են իրականացվել կանխարգելիչ-ստուգիչ միջոցառումներ:

Ինչպես տեղեկացնում են շրջակա միջավայրի նախարարությունից՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում օգոստոսի 26-ին Նորաշեն արգելոցի ջրային տարածքներից դուրս է բերվել ապօրինի տեղադրված 107 խեցգետնաորսիչ եւ 73 ձկնորսական ցանց:

Փաստի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն, խեցգետինները բաց են թողնվել լիճ:

Իրականացվող կանխարգելիչ-ստուգիչ միջոցառումները կրում են շարունակական բնույթ:

ՊԱՅՔԱՐ՝ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը շարունակում է անզիջում պայքարը թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության սահմանով անօրինական տեղափոխման ուղղությամբ:

Օրերս «Ապավեն Տերմինալ» ՓԲ ընկերության մաքսային հսկողության գոտում մաքսային զննման են ենթարկել ԱՄՆ-ից՝ «Տրանս Շիփփինգ» ՍՊ ընկերության միջոցով ՀՀ ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանին:

Արդյունքում հիշյալ առաքանու մեջ բացի անձնական օգտագործման առարկաներից հայտնաբերվել է նաեւ 1600 գրամ ընդհանուր քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Ձեռնարկվել են «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» եւ «Վերահսկելի մատակարարում եւ գնում» անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց շրջանակում «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի փոխարեն նմանատիպ այլ փոխարինված զանգվածների պարունակությամբ միջազգային սուրհանդակային առաքանին Մեծամոր քաղաքի շենքերից մեկի բակում ստանալուց հետո՝ ձերբակալվել է ՀՀ քաղաքացի Ա.Գ.-ն:

Ձերբակալվելուց հետո՝ վերջինս տարված բացատրական աշխատանքների արդյունքում հայտնել է, որ նշված առաքանին իրեն չի պատկանում եւ այն պետք է փոխանցեր այլ անձի:

Պարզվել է, որ առաքանին ուղարկող անձը հանդիսանում է ՀՀ քաղաքացի Ա.Ա.-ն, ով բազմիցս առաքանիներ է ուղարկել Հայաստան: Այդ առաքանիների մեջ եղել են առանձնապես խոշոր չափերի «մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ: Ծանրոցների ուղարկման փաստերով նախկինում ձեռնարկված ՕՀ միջոցառումներ արդյունքում ձերբակալվել է 7 քաղաքացի»,- ասված է հաղորդագրության մեջ:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

ԱՅՍՈՒՀԵՏ՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ»-Ի 100% ԲԱԺՆԵՏԵՐ

Մայն թվականի օգոստոսի 27-ի նիստում ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը նախնական համաձայնություն է տվել Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 75 եւ ավելի տոկոս ուղղակի նշանակալի մասնակցության ձեռքբերմանը: Դրանից առաջ՝ ս/թ. հունիսի 6-ին, ստացվել էր նաեւ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի թույլտվությունը «Արդշինբանկ» եւ «Էյչ-Էս-Բի-Սի» բանկ Հայաստան ընկերությունների համակենտրոնացման մասով:

Այսպիսով՝ «Արդշինբանկը» հայտնում է, որ վերահսկող ու հակամենաշնորհային մարմինների կողմից ստացել է անհրաժեշտ բոլոր թույլտվությունները «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ի 100% բաժնեմասերը ձեռք բերելու ու գործարքը ավարտելու համար:

Առաջիկա ամիսներին կշարունակվեն աշխատանքները «Արդշինբանկի» համակարգ «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանի» միգրացիայի ուղղությամբ: Միգրացիայի հաջող ավարտին պես կվերջնականացվի բանկի ձեռքբերման գործարքը:

Գործարքի կապակցությամբ «Արդշինբանկը» մեկ անգամ եւս հայտնում է, որ ուրախ է ողջունելու «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ի հաճախորդներին իր բանկային հարթակում եւ ապահովելու է նրանց սահուն եւ անխափան անցումն «Արդշինբանկի» համակարգ: «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ի հաճախորդները կշարունակեն օգտվել անհատականացված ծառայությունների մատուցման առավելություններից՝ ստանալով նաեւ հասանելիություն «Արդշինբանկի» բանկային պրոդուկտների լայն տեսականուն:

Կենտրոնական բանկի կողմից նշանակալի մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության տրման կապակցությամբ «Արդշինբանկի» վարչության նախագահ Արտակ Անանյանն ասաց. «Այս գործարքի հաջող ավարտը նշանակալի փուլ կդառնա «Արդշինբանկի» երկարաժամկետ ռազմավարության իրականացման ճանապարհին, որի գլխավոր նպատակն է բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխման (IPO) իրականացումը կապիտալի միջազգային շուկաներում»:

«Արդշինբանկի» մասին

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում:

«Արդշինբանկն» ունի ավելի քան 385.000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 1.700-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 65 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով: Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում:

Արդշինբանկը Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է: Բանկը նաեւ միակ ընկերությունն է Հայաստանում, որ թողարկել է եվրոպարտատոմսեր միջազգային կապիտալի շուկաներում:

«Արդշինբանկը» ներդրումներ է կատարում այլընտրանքային էներգետիկայի ոլորտում՝ մեծացնելով իր ներգրավվածությունը «կանաչ բանկինգում»: Բանկի գործունեությունը հիմնված է սոցիալական պատասխանատվության ու շրջակա միջավայրի պահպանության սկզբունքների վրա՝ ամուր կորպորատիվ կառավարման զուգորդմամբ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 16.09.2024 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024 թ.- ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

. Լոտ՝ ՀՀ, Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների բանավանի 8-րդ փողոց, 11 հասցեում գտնվող 488,19 քմ բնակելի տուն, 36,4 քմ ավտոտնակ եւ 0,101 հա հողամաս,

. Լոտի մեկնարկային գինը՝ 27500000 (քսանյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

. Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար), Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

. իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

Էլ. փոստ՝ llcbst@yahoo.com, հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31, հեռ.՝ +374 11 56 45 13, կայք՝ www.llcbst.am , www.borsa.am.

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ՀՀ, Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Սպանդարյան փողոց, 9 շենք, 33 հասցեում գտնվող 64,8 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12200000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 16.09.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 16.10.2024 թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղում աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԵՍ ՎՐԵԺԽՆԴԻՐ ԿԼԻՆԵՄ ԱՇԽԱՐՀԻՑ ՍԻՐՈ ՄԻՋՈՑՈՎ»

ՖԻԼՄԸ՝ ՎԵՆԵՏԻԿԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Ռեժիսոր Զառա Ջյանի «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով. Ս. Փարաջանով» վավերագրական ֆիլմը մեծ հաջողություն է գրանցել՝ ընդգրկվելով Վենիսիկի 81-րդ միջազգային կինոփառատոնի պատշգամբային ծրագրում՝ VENICE CLASSICS խմբի մրցութային բաժնում: Մեծն Փարաջանովին նվիրված ֆիլմի համաշխարհային ռեմիերան տեղի է ունենալու սեպտեմբերի 6-ին Վենետիկում: Անդրանիկ ցուցադրությանը ներկա կլինեն ինչպես ֆիլմի հերոսները, այնպես էլ ստեղծագործական եւ պրոդյուսերական կազմը, Իտալիայի Հանրապետությունում ՀՀ Դեսպանատան ներկայացուցիչներ, Իտալիայի Հանրապետության Վենետո նահանգում ՀՀ Հյուպատոսարանի ներկայացուցիչներ, Մխիթարյան Միաբանության ներկայացուցիչներ, փառատոնի հյուրեր եւ միջազգային գործընկերներ:

Ֆիլմը սկսվում է հեղինակի՝ ժամանակակից ռեժիսորի որոշումից. լքել այն երկիրը, որտեղ նա ապրում է՝ կապված դրամատիկ իրադարձությունների բռնկման հետ, վերադառնալ հայրենի տուն՝ Հայաստան՝ որոնելու լուծումներ, թե ինչպես շարունակել ապրել: Փարաջանովի տուն թանգարանը դառնում է ոգեշնչման վայր (հիմնված իրական իրադարձությունների վրա):

Ֆիլմում անցյալը հանդիպում է ներկային: Փարաջանովի կյանքի եւ ստեղծագործության միջոցով եւ հենց նրա հետ միասին կհետազոտվեն այնպիսի հարցեր, ինչպիսինն են մարդու ազատության թեման ոչ ազատ պայմաններում, ինչպես են փշալարերը եւ պատերազմները ազդում մշակույթի եւ մշակութային գործիչների վրա, որն է, գուցե, միակ ճիշտ ընտրությունը թունավոր իրականության պայմաններում եւ այլն: Կյանքն ու ստեղծագործելը պետք է գոյություն ունենան՝ չնայած արգելքներին եւ բռնապետություններին: Ֆիլմի պրոդյուսերն է Անի Ոսկանյանը, ռեժիսորն ու սցենարի հեղինակը Զարա Ջյանն է, իսկ պրոդյուսերը՝ Շուշանիկ Միրզախանյանը:

Զարա Ջյանը նշեց «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով. Ս. Փարաջանով» վավերագրական ֆիլմը անցել է Վենետիկի կինոփառատոնի կլասիկ բաժնի մրցույթային ծրագիր:

«Դա իսկապես մեծ անակնկալ էր, դեռ չենք հասկանում, չենք կարողանում այդ էմոցիաները վերապրել, որովհետեւ դրանք ընդգրկում են մեծ աշխատանք, որով հիմա զբաղվում ենք մենք՝ բոլորս: Վաղը արդեն մեկնում ենք: Նաեւ կունենանք նորություն, որի մասին կտեղեկանաք, կարծում եմ, Վենետիկից»:

Ֆիլմը հայ-ֆրանսիական արտադրության է. Մեծ Բրիտանիան եւս մեծ դեր է ունեցել ֆիլմի ստեղծման գործընթացում:

Ֆիլմի ֆրանսիական համապրոդյուսերն է Ստեֆան Ժյուրդենը: Նախագծին աջակցել են Հայաստանի ազգային կինոկենտրոնը, ԿԳՄՍ Նախարարությունը, ինչպես նաեւ ֆիլմի համաարտադրող՝ Ֆրանսիական CNC եւ Cine+ կազմակերպությունները:

Փարաջանովն աշխարհահռչակ էր. նա մինչ օրս նշաձող եւ օրինակ: Մեծ է նաեւ այս ֆիլմի աշխարհագրությունը: Նկարահանումները տեղի են ունեցել Հայաստանում, Սերբիայում, Լատվիայում եւ Գերմանիայում, Սերբիայում՝ 2023 թ. հունիսին, որտեղ նկարահանվել է հարցազրույց Էմիր Կուստուրիցայի հետ, Ռիգայում (Լատվիա)՝ 2023 թ. օգոստոսին, որտեղ նկարահանվել են հարցազրույցներ Չուլպան Խամատովայի, Լորա Գուերայի հետ, Բեռլինում՝ 2024 թ. փետրվարին, որտեղ նկարահանվել է հարցազրույց Ատոմ Էգոյանի հետ եւ Երեւանում՝ 2023 թ. հուլիս-հոկտեմբեր եւ 2024 թ. փետրվար ամիսներին՝ հարցազրույցներ Արտավազդ Փելեշյանի, Ժոել Շապրոնի, Ալի Համրաեւի, Լեւոն Աբրահամյանի հետ: 2024 թվականի հունվարին ֆիլմում նկարահանվելու նպատակով՝ հատուկ ճանապարհորդություն դեպի Երեւան կատարեց նաեւ Տարսեմ Սինգխը: Երեւանում է նկարահանվել նաեւ ֆիլմի խաղարկային մասը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ ՄԻԱՑԵԼ Է ՓԱՌԱՏՈՆԻՆ

Չինաստանի Շանհայ, Շենժեն, Ջինյան, Անկանգ եւ Նանտոնգ քաղաքներում անցկացվել է «Փոքրիկ ամրոց» միջազգային տիկնիկային թատերական 1-ին փառատոնը, որին մասնակցել է նաեւ Հովի. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնը՝ «Մատնաչափիկը» ներկայացումով:

Փառատոնին մասնակցում էին նաեւ ՌԴ-ի, Գերմանիայի, Բուլղարիայի, Իսպանիայի, Չինաստանի, Լեհաստանի, Իրանի թատերախմբեր:

Հովի. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնը «Մատնաչափիկը» ներկայացումը խաղացել է Չինաստանի 5 տարբեր քաղաքների 7 տարբեր հարթակներում՝ ընդհանուր 14 ներկայացում, որը դիտել է շուրջ 5000 հանդիսատես:

Հանդիսատեսը շատ ջերմ է ընդունել ներկայացումը. այն արժանացել է կազմակերպիչների բարձր գնահատականին:

ԱՃՈՒՐԴԻ ԵՆ ՀԱՆՎԵԼ ԴԱԼԻԻ ԳՈՐԾԵՐԸ

Իսպանացի նկարիչ Սալվադոր Դալիի (1904-1989 թթ.) վիմատպությունները, որոնք մոտ կես դար պահվել են Լոնդոնի կենտրոնի ավտոտնակներից մեկում, աճուրդի են հանվել Մեծ Բրիտանիայի Hansons աճուրդային տանը: Խոսքը հին հռոմեացի բանաստեղծ Օվիդիուսի «Սիրո գիտություն» պոեմի համար նկարազարդումների շարքի մասին է:

Այդ վիմատպությունները, որոնք պատկերում են հին հունական առասպելների հերոսների, Դալին ստեղծել է 1970-ական թվականներին: Դրանք աճուրդով կվաճառվեն սեպտեմբերի 30-ին:

Hansons-ի փոխտնօրեն Քրիս Քերքեմը հայտնել է, որ այդ գործերը պատահաբար է հայտնաբերել իր հաճախորդներից մեկի տուն այցելության ժամանակ:

«Երբեք չգիտես, թե ինչ կհայտնաբերես սովորական տնային այցի ժամանակ: 1970-ականներին գնորդը համեստ 500 ֆունտ ստեռլինգ է վճարել առանց շրջանակների վիմատպությունների համար Լոնդոնի կենտրոնական պատկերասրահում փակ վաճառքի ժամանակ: Նա դրանք գնել է, որպեսզի շրջանակներում դնի Բերքլի Սքվերի իր տանը, բայց գործն այդպես էլ դրան չի հասել: Ուստի դրոշմանկարները հայտնվել են նրա ավտոտնակում: Դրանք կրկին հայտնաբերվել են, երբ նա հիմնավոր մաքրություն է սկսել: Նա ցանկանում է թոշակի անցնել եւ տեղափոխվել արտասահման, այնպես որ, նրա վիմատպությունները վերջապես կհայտնվեն աճուրդում», - նշել է Քերքեմը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԵՐԵԶՈՎՍԿԻՆ ԽՐԱԽՈՒՍՎԵԼ Է ԿԳՄՄՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի լեգենդար դարպասապահ Ռոման Բերեզովսկին հայկական ֆուտբոլում ունեցած նշանակալի ավանդի համար խրախուսվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության շնորհակալագրով: Պարգեւը նախկին դարպասապահին է հանձնել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՀՀ ԿԳՄՍՆ-ի տարածած հաղորդագրությունից:

«Ռոման Բերեզովսկին օգոստոսի 5-ին տոնել է ծննդյան 50-ամյակը: Նախարարի տեղակալը շնորհավորել է դարպասապահին հոբելյանի կապակցությամբ եւ շնորհակալություն հայտնել հայկական ֆուտբոլին նվիրած տարիների, գործադրած ջանքերի եւ նվիրումի համար:

«Դուք, անկասկած, եղել եք անկախ Հայաստանի ազգային հավաքականի խորհրդանիշներից մեկն ու Ձեր հուսալի խաղով բազմիցս նպաստել եք մեր հաղթանակների կայացմանը: Ֆուտբոլասերների կողմից արժանիորեն վայելել եք մեծ սեր, ու այդպես կլինի միշտ»,- նշել է Կարեն Գիլոյանը՝ դիմելով Ռոման Բերեզովսկուն:

Հայաստանի ազգային հավաքականի նախկին դարպասապահը շնորհակալություն է հայտնել գնահատանքի համար եւ ընդգծել՝ միշտ հպարտությամբ է կրել Ազգային թիմի մարզաշապիկն ու պաշտպանել մեր երկրի պատիվը, այժմ էլ հայկական ֆուտբոլին իր գիտելիքներն ու փորձը փոխանցում է՝ որպես Հայաստանի հավաքականի դարպասապահների մարզիչ:

ՖԼԵՅ-ՕՖՖ ՓՈՒԼԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Երեւանի «Ֆյունիկը» մեկնել է Սլովենիա, որտեղ կանցկացնի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման փլեյ-օֆֆ փուլի պատասխան հանդիպումը «Ցելյեի» դեմ, հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը:

Հայաստանի ու Սլովենիայի չեմպիոնների խաղը կկայանա այսօր՝ օգոստոսի 29-ին: Առաջին խաղում երեւանյան ակումբը տնային հաղթանակ է տարել նվազագույն 1-0 հաշվով:

Եղիշե Մելիքյանի գլխավորած թիմը եվրագավաթներում պայքարը սկսել էր Չեմպիոնների լիգայից, որի որակավորման առաջին փուլի երկխաղյա դիմակայությունում պարտվել էր Մինսկի «Դինամոյին» (0-0, 0-1) եւ պայքարը շարունակում է Կոնֆերենցիաների լիգայում: Որակավորման նախորդ երկու փուլերում Հայաստանի 16-ակի չեմպիոնը հաղթել է հյուսիսմակեդոնական «Ստրուգային» (1-2, 3-1) ու Ղազախստանի չեմպիոն «Օրդաբասիին» (1-0, 1-0):

● *Սեպտեմբերի 1-ին՝ ժամը 20:30-ին, «Թատրոն տանիքում» կցուցադրվի «Լռակյաց հիվանդը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 5.000-7.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա ինչպես է վճարվում նրա կենսաթոշակը:

Գրետա Հարությունյան (71 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը եւ այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը:

Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Ի դեպ, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչպիսի պարտականություններ ունեն ծառայողական քննության կողմերը:

Վազգեն Սաֆարյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ծառայողական քննության կողմը պարտավոր է՝

ա) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայանալ քննության կատարման վայր եւ տալ բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների եւ ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ չստորագրելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

բ) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայացնել քննության համար անհրաժեշտ իր մոտ եղած առարկաները եւ փաստաթղթերը,

գ) ենթարկվել ծառայողական քննություն վարողի՝ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ պարտականություններ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ամառային արձակուրդների վերջին օրերը այսպես են անցնում Սյունիքի մարզային գրադարանում: Փոքրիկ գրքասերները անցկացրել են հագեցած ամառ՝ մասնակցելով գրադարանում իրականացվող բազմաթիվ միջոցառումներին:

Ի դեպ, գրադարանն այդ ամռանը ունեցել է 1201 նոր գրանցված ընթերցող:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11 + 16 +28 + 33
Կոտայքի լեռներ	+10 + 16 +28 + 30
Կոտայքի նախալեռներ	+20 + 23 +35 + 36
Գեղարքունիք	+11 + 16 +25 + 28
Լոռի	+ 14+ 18 +29 + 33
Տավուշ	+ 18+ 22 +31 + 36
Արագածոտնի լեռներ	+ 11 + 14 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +28 + 31

Արարատ	+ 23 + 25 +38 + 39
Արմավիր	+ 20+ 22 +37 + 38
Վայոց ձորի լեռներ	+11 + 14 +29 + 31
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23 +36 + 39
Սյունիքի հովիտներ	+21 + 24 +36 + 39
Սյունիքի նախալեռներ	+ 14 + 17 +30 + 32
ԼՂՀ	+ 13 + 16 +29 + 32
Երեւան	+30 + 32 + 36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.8.2024**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*